

ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Պետական գույքի մասնավորեցումը հանրապետությունում ընթացող տնտեսական բարեփոխումների կարևոր մասերից է: 1998 թվականից սկսած հանրապետությունում մասնավորեցման գործընթացը իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998 – 2000 թվականների ծրագրի մասին» օրենքին համապատասխան (ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 26 – ին): Ծրագրում ամրագրվել են հետևյալ հիմնական նպատակները՝

- տնտեսության մասնավորեցման աստիճանի բարձրացում,
- ընկերությունների (ձեռնարկությունների) գործունեության արդյունավետության բարձրացում,
- հիմնականում ավարտել պետական գույքի մասնավորեցման գործընթացը,
- պետական գույքի մասնավորեցման մեթոդների ընդլայնում, այդ թվում մրցույթների ավելի լայն կիրառում առավելագույնս խրախուսելով ներդրումները և ընկերությունների (ձեռնարկությունների) վաճառքը ռազմավարական ներդրողներին,
- պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական բյուջեի եկամուտների ավելացում:

1998 – 2000 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական ընկերությունների ցանկում առկա են բոլոր էներգետիկ ընկերությունները, բացառությամբ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ –ներից:

Սակայն 2000 թվականի հուլիսի 28-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին: էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման հիմնական նպատակներն են՝

- Հայաստանի Հանրապետությունում սահմանված տեխնիկական կանոնակարգերին և գործունեության լիցենզիայի պայմաններին համապատասխան էլեկտրաէներգիայի ամխափան և հուսալի շուրջօրյա մատակարարման ապահովումը սպառողներին,
- էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների կառավարման արդյունավետության և էլեկտրաէներգիայի կորուստների առավելագույնս նվազեցումը,
- էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի վերազինման, ընդլայնման և զարգացման համար ներդրումների ներգրավման ապահովումը,
- սպառողներին մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց գումարների գանձման և որպես հետևանք էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավումը,
- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համալրումը:

էլեկտրաէներգիա բաշխող նոր ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի գնման, վաճառքի, ինչպես նաև բաշխման գործունեության սակագները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով: Էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման միջազգային մրցույթում հաղթող ձանաչված ռազմավարական ներդրողների հետ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը կնքում է էլեկտրաէներգիայի սակագնային մարժայի համաձայնագիր:

Սակագնային մարժան բաշխման ընկերությունների համար (ՍՄ) իրենից ներկայացնում է էլեկտրաէներգիայի վաճառքի (Ս_վ) և գնման (Ս_գ) միջին կշռված սակագների տարբերությունը:

$$ՍՄ = \text{Ս}_\text{վ} - \text{Ս}_\text{գ}$$

(1) ·

Գնման միջին կշռված սակագինը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$U_{qi} = \frac{\sum_i U_{qi} \cdot W_{qi}}{\sum_i W_{qi}} \quad (2)$$

որտեղ U_{qi} և W_{qi} համապատասխանաբար i – թղարտադրողից (կամ ներմուծողից) էլեկտրատեներգիայի զննման սակագինն է և զննված էլեկտրատեներգիայի քանակը (կվտժ):

Վաճառքի միջին կշռված սակագինը իրենից ներկայացնում է տարբեր խմբերի սպառողներին էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագներով վաճառվող էլեկտրատեներգիայի միջին կշռված մեծությունը՝

$$U_q = \frac{\sum_i U_{qi} \cdot W_{qi}}{\sum_i W_{qi}} \quad (3)$$

որտեղ U_{qi} և W_{qi} համապատասխանաբար սպառողների խմբերի (i) համար հաստատված սակագներն են (այդ թվում գիշերային և ցերեկային) և այդ սակագներով վաճառվող էլեկտրատեներգիայի քանակը (կվտժ):

Չետագայում, երբ որոշ սպառողների մոտ կներդրվի երկդրույթ սակագներ (էլեկտրատեներգիայի քանակի (կվտժ) և հզորության (կվտ)) և կկիրառվի բաժանորդային վճարի գաղափարը, միջին կշռված սակագնի բանաձևը կընդունի ավելի բարդ տեսք՝

$$U_q = \frac{\sum_i E U_i \cdot W_{qi} + \sum_i P U_i \cdot N_i + \sum_i P_v}{\sum_i W_{qi}} \quad (4)$$

որտեղ՝

$E U_i$, $P U_i$ և P_v համապատասխանաբար սպառողների խմբերի (i) համար հաստատված կվտժ – ի, կվտ – ի սակագներն են և բաժանորդային վճարներն են: N_j – j -րդ սպառողի պայմանագրային հզորությունն է:

Բաշխիչ ցանցերի սակագնային մարժան պետք է ապահովի նրանց անհրաժեշտ հասույթը, որը հավասար է՝

$$U_B = C_{\Gamma B} + U + \beta + C + q E U + U_{\Gamma \Gamma} \quad (5)$$

որտեղ՝

ՇՊԾ-Ո՝ – շահագործման և պահպանման ծախսերն են,

Ս-Ո՝ – հիմնական միջոցների մաշվածքն է,

Հ-Ո՝ – հարկերն են,

Շ-Ո՝ – թույլատրելի շահույթն է,

ԳԷԱ-Ո՝ – գնված էլեկտրաէներգիայի արժեքն է,

ՍՂՊ-Ո՝ – սակագնում ընդգրկվող անհուսալի դեբիտորական պարտքերի մեծությունն է:

Շահագործման և պահպանման ծախսերը ընդգրկում են էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից թույլատրված տեխնիկական սպասարկման և նորոգման, շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը, աշխատավարձը և սոցիալ ապահովագրության, թոշակային հիմնադրամին վճարումները, վարչական, կառավարման, իրացման և ընդհանուր բնույթի այլ ծախսերը:

Մաշվածքը հաշվարկվում է գծային եղանակով՝ մրցույթի արդյունքում ձևավորված ընկերության հիմնական ակտիվների և հետագա ներդրումների գումարից, ելնելով նրանց կյանքի տևողությունից:

Հարկերը հաշվարկվում են համապատասխան ՀՀ հարկային օրենսդրության՝ հիմք ընդունելով սակագնի հաշվարկում ընդգրկված հասույթը և ծախսերը:

Ընկերության խելամիտ շահույթը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Շ} = \text{ՁԱԱ} \cdot \frac{\text{ԱՇՆ (ROA)}}{100} \quad (6)$$

որտեղ՝ ՁԱԱ - ն ընկերության զուտ ակտիվների արժեքն է սակագնի հաշվարկման պահին (շահույթի հաշվարկման բազա):

$$\text{ՁԱԱ} = \text{ԸԳ} + \text{ՀՆ} + \text{ՇԿ} - \text{ԿՍ} \quad (7)$$

որտեղ՝ ԸԳ - ն մրցույթի արդյունքում ձևավորված ընկերության զինն է,

ՀՆ - ն հետագա ներդրումներն են, կատարված մինչև սակագնի հաշվարկման պահը,

ՇԿ - ն էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված շրջանառու կապիտալի մեծությունն է,

ԿՍ — Ը մասնավորեցումից հետո մինչև տվյալ պահը սակագների հաշվարկներում հաշվեգրված կուտակված մաշվածությունն է:

ԱՇՆ — Ը ընկերության զուտ ակտիվների նկատմամբ շահութաբերության նորման է:

Գնված էլեկտրատներգիայի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԳԷԱ = \frac{W_q}{1 - \alpha} \cdot U_q \quad (8)$$

որտեղ α — Ը կորուստների մեծությունն է բաշխիչ ցանցի գնված էլեկտրատներգիայի նկատմամբ արտահայտված միավորի մասերով (օրինակ՝ 10% = 0.1), որը տվյալ տարում էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը թույլատրում է ընդգրկել սակագնի հաշվարկում:

Անհուսալի դեբիտորական պարտքերը, որոնք էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից թույլատրվում է տվյալ տարում ընդգրկել սակագնի հաշվարկում որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$ԱԴՊ = \beta \cdot W_q \cdot U_q \quad (9)$$

որտեղ β — Ը թույլատրելի դեբիտորական պարտքի մեծությունն է ընդհանուր հասույթի նկատմամբ արտահայտված միավորի մասերով:

Էլեկտրատներգիայի վաճառքից ստացվող անհրաժեշտ հասույթը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = U_q \cdot W_q = ՇՊԾ + Մ + Հ + ԳԷԱ + Շ + ԱԴՊ \quad (10)$$

այնուհետև հաշվի առնելով (8) և (9) բանաձևերը կստանանք՝

$$U_q = \frac{\text{ՇՊԾ} + \text{Մ} + \text{Հ} + \text{Ս}_q \cdot W_q \cdot \frac{1}{1 - \alpha}}{W_q \cdot (1 - \beta)} \quad (11)$$

և վերջապես տեղադրելով (1) արտահայտության մեջ կստանանք բաշխիչ ցանցերի սակագնային մարժայի որոշման բանաձևը՝

$$\text{ԱՍ} = \frac{\text{ՇՊԾ} + \text{Մ} + \text{Հ} + \text{Ս}_q \cdot W_q \cdot \frac{1}{1 - \alpha}}{W_q \cdot (1 - \beta)} - \text{Ս}_q \quad (12)$$

Այս բանաձևով սակագնային մարժան հաշվարկվում է կանխատեսվող տարվա էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ցուցանիշների հիման վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է դիտարկել բաշխիչ ցանցերի մասնավորեցման երկու մոդել և նրանից բխող երկու մոտեցում սակագնային մարժայի հաշվարկի համար: Երկու մոտեցման դեպքում ենթադրվում է, որ մասնավորեցումից հետո ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռները պետք է վերանայվեն և նոր ընկերությունները իրենց գործունեությունը կսկսեն նոր սկզբնական հաշվեկշռով:

Առաջին մոտեցումը ենթադրում է, որ սկզբնական հաշվեկշիռը կծնավորվի մրցույթի արդյունքներով: Այսինքն՝ ելնելով ռազմավարական ներդրողին առաջարկվող բաժնետոմսերի փաթեթի համար պետությանը վճարված գումարից, կորոշվի բաժնետիրական կապիտալի արժեքը (100%), որին գումարելով ընկերության հաշվեկշռում թողնված կրեդիտորական պարտքը կստանանք նոր ընկերության ակտիվների սկզբնական արժեքը: Հետագա սակագների հաշվարկում այդ արժեքը հիմք կհանդիսանա մաշվածքի և շահույթի հաշվարկման համար:

Այս մոտեցման հիմնական թերություններն են՝

1. Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը սակագնային համաձայնագրով պարտավորվելով ապահովել 16% զուտ ակտիվների նկատմամբ շահույթի նորմա, փաստորեն պարտադրում է ընկերությանը ունենալ այդ շահույթի նորման և դա այն դեպքում, երբ մրցույթի մասնակիցը այն չափելու նպատակով կարող էր համաձայնվել ավելի ցածր շահույթի նորմայի: Այսինքն՝ այնպիսի կարևոր մրցութային ցուցանիշ ինչպիսին է պահանջվող շահույթի նորման դադարում է գործել:
2. Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հնարավորությունները վերահսկել սակագների մակարդակը սահմանափակվում է, որովհետև այն կախված կլինի մրցույթի արդյունքներից:
3. Առաջին երեք տարում ֆիքսված հաստատուն մարժայի պայմաններում ընկերությունը (հետևաբար և ռազմավարական ներդրողը) կունենա որոշակի կորուստներ, որը կստիպի նրան իջեցնել զման գինը, որի հետևանքով կիջնեն նաև հաշվարկվող սակագները: Ցածր սակագները իրենց հերթին կստիպեն ավելի ու ավելի իջեցնել առաջարկվող գինը: Հավասարակշռությունը ստեղծվում է բավականին ցածր գնի դեպքում:

4. Տեսականորեն հնարավոր է, որ ռազմավարական ներդրողը առաջարկի բարձր գնման գին (քիչ հավանական է ֆիքսված հաստատուն մարժայի և մրցույթին մասնակցող մասնակիցների քանակի պատճառով), որին հետագայում կհետևի բարձր սակագներ:

Այս մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ մրցակցության բացակայության կամ անազնիվ մրցակցության պայմաններում գնորդը ստեղծված իրավիճակից չի կարող ակնկալել ստանալ գերշահույթներ վճարելով ցածր գին, որովհետև դրան կհետևի ցածր սակագներ:

Երկրորդ մոտեցումը ենթադրում է, որ նոր ընկերությունների սկզբնական հաշվեկշիռը նախօրոք որոշվում է և հանդիսանում է մրցութային փաթեթի մաս: Հետագա բոլոր հաշվարկները, անկախ բաժնետոմսերի վաճառքի գնից, կատարվում են ելնելով սկզբնական հաշվեկշռից: Այդ դեպքում սկզբնական հաշվեկշռում զուտ ակտիվների արժեքը որոշվում է ելնելով սակագների ընդունելի մակարդակից, հաշվի առնելով անհրաժեշտ ներդրումների մեծությունը: Ընկերությունների սեփական կապիտալի մեծությունը կորոշվի ակտիվների և պարտավորությունների տարբերությամբ և ոչ մի կապ չի ունենա մրցույթի արդյունքների հետ:

Երկրորդ մոտեցման էական թերությունը հետևյալում է՝ եթե մրցույթի ժամանակ չլինի իրական մրցակցություն հայտատուների միջև (մնացել է մեկ հայտատու, կամ հայտատուների միջև կայացել է փոխպայմանավորվածություն), որի արդյունքում հայտատուն(ները) ստանալով սակագնային համաձայնագրով երաշխավորված սակագներ, գերշահույթներ ստանալու ակնկալիքից ելնելով, կարող են վաճառողի համար առաջարկել անընդունելի ոչ խելամիտ՝ գին, որի հետևանքով կարող է խափանվել մասնավորեցման գործընթացը:

Մասնավորեցման ժամանակ կարելի է ընդունել այս երկու մոտեցման փոխգիջումային տարբերակը: Այս տարբերակի էությունը հետևյալում է՝

Ելնելով սակագների ընդունելի մակարդակից և հաշվի առնելով անհրաժեշտ ներդրումների ծավալը որոշվում է ընկերությունների սկզբնական հաշվեկշիռը: Ընկերությունների սեփական կապիտալի մեծությունը կորոշվի ակտիվների և պարտավորությունների տարբերությամբ: Եթե մրցույթի

արդյունքում ռազմավարական ներդրողը առաջարկում է ստացված մեծությունից ավելի ցածր գին, ապա հետագա սակագները հաշվարկվում են սակագնային համաձայնագրում ամրագրված սակագնային մարժայի բանաձևի միջոցով: Բարձր գնի առաջարկման դեպքում պահպանվում են ընդունելի սակագների մակարդակը:

Այս տարբերակի առավելություններն են՝

1. Մրցակցության բացակայության կամ անազնիվ մրցակցության պայմաններում գնորդը օգտվելով ստեղծված իրավիճակից չի կարող ակնկալել ստանալ գերշահույթներ վճարելով ցածր գին, որովհետև համաձայն սակագնային մարժայի բանաձևի կիստևի ցածր սակագներ:
2. Բարձր գնի առաջարկման դեպքում պահպանվում է սակագների ընդունելի մակարդակը: Դա նշանակում է, որ մրցույթի մասնակիցը համաձայնվում է ավելի ցածր շահույթի նորմայով աշխատելու պայմանին:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998 – 2000 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 26 – ին:
2. «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կանոններ և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 2000 թվականի հուլիսի 28-ին:
3. Ծովյան Ռ. Վ., Ղոսալմյան Հ. Ա., Բաղդամյան Գ. Զ., Բաշխիչ էլեկտրացանցների սակագնային մարժայի բանաձևը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարեկան գիտաժողով, Նյութերի ժողովածու, հատոր 1, Երևան 2000: